

ԿԱՐԾԻՔ

Անի Հրաչյայի Ոսկանյանի

«Ադանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը եւ ունեզրկումը 1909-1918 թթ.» թեկնածուական ատենախոսության մասին

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության մեջ առանցքային տեղ է գրավում ցեղասպանության գլխավոր դրդապատճառներից մեկի՝ հայերի շարժական և անշարժ գույքերի կողոպտման թեման: Պատահական չէ, որ վերջին տարիներին այդ հարցով սկսել են ակտիվորեն հետաքրքրվել նաև որոշ թուրք ուսումնասիրողներ: Ինչպես հայտնի է, հայերի և Օսմանյան պետության կողմից ցեղասպանության ենթարկված մյուս ժողովուրդների՝ հույների և ասորիների ունեզրկման միջոցով է ի հայտ եկել ներկայիս թուրքական կապիտալի մի զգալի մասը, և Թուրքիայի այժմյան մեծահարուստներից մի քանիսն ունևոր են դարձել հենց հայերի սեփականության յուրացման ճանապարհով: Բացի այդ, հանրահայտ փաստ է, որ հայկական ունեցվածքը, օսմանյան և թուրքական պետական գործիչների կողմից ընդունված հատուկ օրենքների համաձայն, հանձնվել է նաև Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից, կազմակերպիչներից և իրագործողներից մի քանիսի ընտանիքներին:

Նկատի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ չափազանց կարևոր և արդիական է դառնում Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում հայերի ունեզրկման թեմայի ուսումնասիրությունը: Կարծում ենք, որ հայերի լքյալ գույքի թեմայի համակողմանի հետազոտությունը վաղուց էր ժամանակի հրամայականը դարձել: Համարում ենք նաև, որ արդյունավետ կլինի, եթե հայ գիտնականներն սկսեն այս հարցն ուսումնասիրել նահանգ առ նահանգ կամ գավառ առ գավառ: Ուրախալի է, որ այդ գործն արդեն մեկնարկել է որոշ հայ ուսումնասիրողների կողմից: Հարկ է շարունակական դարձնել այս թեմայի ուսումնասիրությունը՝ առանձին-առանձին անդրադառնալով Օսմանյան կայսրության զանազան բնակավայրերին:

1915-1918 թթ. հայերի ունեզրկման պատմության մեջ ուրույն տեղ է գրավում պատմական Կիլիկիայի շրջանը: Ինչպես հայտնի է, հենց այս տարածքում էր գտնվում Սսի կաթողիկոսարանը, որին պատկանած հողատարածքի և գույքի վերադարձի համար վերջին տարիներին մինչև իսկ դատական գործընթաց էր մեկնարկել: Բացի այդ, այս շրջանում էր տեղակայված նաև ԱՄՆ-ի Ինջիրլիքի ռազմաբազան, որը ևս գտնվում էր հայապատկան տարածքում:

Վերոնշյալը նկատի առնելիս ուղղակի անգնահատելի են դառնում Անի Ոսկանյանի «Ադանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը և ունեզրկումը 1909-1918 թթ.» վերնագրով թեկնածուական ատենախոսության արդիականությունն ու կարևորությունը, քանի որ այն առանձին անդրադառնում է նշված ժամանակաշրջանում Ադանայում հայերի ցեղասպանությանը և վերջինիս անքակտելի մաս կազմած ունեզրկման գործընթացին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանված են ընդհանուր 6 ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործված սկզբնաղբյուրներից ու հարուստ գրականության ցանկից:

Ատենախոսն ըստ էության կարողացել է լուծել իր առջև դրված խնդիրը, այն է՝ համակողմանի ներկայացնել տվյալ ժամանակաշրջանում Ադանա նահանգի հայության ցեղասպանության պատմությունը՝ մանրամասն վերլուծելով հայերի ունեզրկման գործընթացը:

Կարևոր է ատենախոսության 62-րդ և 94-րդ էջերում արտահայտված այն դիտարկումները, թե (մեջբերում եմ). «...Ադանան իր տնտեսության շուրջն էր կենտրոնացրել ու աշխատանքով ապահովել կայսրության տարբեր վայրերից և հատկապես Արևմտյան Հայաստանի նահանգներից աշխատանք որոնողներին: Նահանգը 1909 թ. կոտորածի նախօրեին 100.000-ից ավելի մարդու աշխատանք ունենալու հնարավորություն էր տվել: Ուստի, կարելի է ասել, որ որոշակիորեն խանգարում էր նաև մյուս նահանգներում իրականացվող հայաթափմանը, իսկ նրանց ընտանիքները մնում էին իրենց բնակավայրերում» (էջ 62): «Հայերի նկատմամբ

բոնությունը, հայկական կապիտալի կողոպուտն ու յուրացումը Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բռնազավթումից ի վեր Օսմանյան կայսրության պետական քաղաքականության հիմնական բաղադրիչներից էր: 1909 թ. Ադանայի հայերի ջարդը նպատակային և համակազրված հերթական հարվածն էր ոչ միայն մեծաթիվ զոհերի, այլև հայերի տնտեսական առաջընթացը հստակ կասեցնելու և ունեզրկելու տեսանկյունից» (էջ 94) (մեջբերման ավարտ):

Ատենախոսի վերոհիշյալ դիտարկումները բացահայտում են, թե ինչու Հայոց ցեղասպանության փորձաքարը դարձավ ոչ թե մեկ ուրիշ հայաբնակ շրջան կամ Արևմտյան Հայաստանի նահանգ կամ գավառ, այլ՝ հենց Ադանան:

Կատարելով մանրամասն ուսումնասիրություն՝ ատենախոսը կարողացել է ճիշտ եզրակացությունների հանգել և նոր ձևակերպումներ առաջարկել: Այսպես, «Եզրակացություններ» բաժնում (174-177 էջեր) նա մասնավորապես գրում է (մեջբերում են). «...վաղուց ժամանակն է օսմանյան իշխանությունների կողմից շրջանառության մեջ դրված «լքյալ գույք» եզրույթը (թեկուզ և չակերտավոր կիրառությամբ) փոխարինել ճշգրիտ՝ բռնագրավյալ գույք եզրույթով և չհետևել Հայոց ցեղասպանության իրագործմանը զուգահեռ հանցագործությունը կոծկող և ժխտող տերմինաբանությանը» (մեջբերման ավարտը) (էջ 177):

Այնուամենայնիվ, Անի Ոսկանյանի ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից, վրիպակներից և բացթողումներից: Այսպես՝

1. Ատենախոսության 134-րդ էջում «Լքյալ գույքի մասին օրենքի» ամբողջական անվանումը ներկայացված է արևմտահայերեն, քանի որ վերցված է Հայկազն Ղազարյանի «Ցեղասպան թուրքը» գրքից: Ցանկալի կլիներ, որ ատենախոսը, ով մասնագիտության թուրքագետ է, այդ օրենքի անվանումն անմիջականորեն թարգմաներ օսմաներենից և անվանումը գրեր արևելահայերեն:

2. Ատենախոսության 168-րդ էջում և սեղմագրի 15-րդ էջում նշված է, որ օսմանյան խորհրդարանը 1920 թ. հունվարի 8-ին ընդունել է «Լքյալ գույքի մասին» 33 հոդվածներից բաղկացած մի օրենք: Հարկ է շեշտել, որ իրականում խոսքը գնում է ոչ

թե օրենքի (թուրքերեն կամ օսմաներեն՝ kanun), այլ՝ որոշման (թուրքերեն կամ օսմաներեն՝ karâr-nâme) մասին, իսկ դրանք տարբեր բաներ են: Այդ որոշման ամբողջական տեքստը ներկայացված է թուրք գիտնական Նևզաթ Օնարանի «Լքյալ գույքի դեպքը. Օսմանյան Կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում հայկական ու հունական գույքերի թուրքացումը» աշխատության 334-343 էջերում (Nevzat Onaran, “Emvâl-i Metrûke Olayı. Osmanlı’da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi”, İstanbul, Belge Yayinlari, 2010):

3. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում են թուրքական անվանումների և օսմանյան տեղանունների ոչ ճիշտ տառադարձումներ, որոնք բնորոշ են ոչ թե արևելահայերենին, այլ արևմտահայերենին: Այսպես, օրինակ, ատենախոսության 16-րդ և 32-րդ էջերում նշված Նիդդե տեղանունը ներկայացված է որպես Նիյտե: Բացի այդ, դարձյալ 16-րդ էջում հանդիպում է Ատալիա տեղանունը, որը ենթադրաբար Անթալիան է:

4. Ատենախոսության 39-րդ էջում գրված է «Միրլիվա Ալի փաշա»: Թուրքերեն կամ օսմաներեն չիմացող ընթերցողը կարող է թյուրիմացության մեջ ընկնել և մտածել, թե «Միրլիվան» հատուկ անուն է: Այնինչ “mirliwa”-ն զինվորական աստիճան է, որը համապատասխանում է մեր գեներալ-մայորին:


5. Ատենախոսությունը մեծապես կշահեր, եթե ատենախոսն ավելի շատ օգտվեր թուրքական և օսմանյան աղբյուրներից: Մասնավորապես, ցանկալի կլիներ օգտագործել Նևզաթ Օնարանի վերոհիշյալ աշխատությունը (Nevzat Onaran, “Emvâl-i Metrûke Olayı. Osmanlı’da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi”, İstanbul, Belge Yayinlari, 2010), ինչպես նաև՝ այլ թուրք գիտնականների ուրիշ ուսումնասիրություններ, որոնք վերջին տարիներին հրատարակվել են Թուրքիայում: Որպես օրինակ կարելի է մատնանշել 2012 թ. թուրքական «Իլեթիշիմ» հրատարակչության կողմից տպագրված Թաներ Աքչամի և Ումիթ Քուրթի համատեղ գիրքը, որը կրում է Kanunların Ruhu: Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini

Sürmek (Օրենքների ոգին. հետևել Ցեղասպանության հետքին՝ «Լքյալ գույքի» մասին օրենքներում» վերնագիրը:

Բայց և այնպես, նշված բացթողումներն ամենևին չեն ստվերում ատենախոսության գիտական նշանակությունը: Ատենախոսության տեքստը, ինչպես նաև հեղինակի նախորդ գիտական հրապարակումները վկայում են ատենախոսի վերլուծական ունակությունների և օտար լեզուների իմացության մասին: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԲՈԳ-ի պահանջներին, սեղմագիրն արտացոլում է ատենախոսության բովանդակությունը, իսկ հեղինակը՝ Անի Հրաչյայի Ոսկանյանը, միանգամայն արժանի է կրելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պատմական գիտությունների թեկնածու



Մելինե Վահեի Անունյան

12.09.2024 թ.

Պաշտոնական ընդդիմախոս Մելինե Վահե Անունյանի

ստորագրությունը հաստատում եմ

Բանասիրական գիտությունների դոկտոր Հայկազուն Սերգեյի Ավերջյան

